278 Թող օրհնվի մեր հավաքը,

1. Թող օրհնվի մեր հավաքը,
Հորը հասնի տրված փառքը,
Փառաբանենք Հայր Աստծուն: (3)
Ալելուիա, օվսաննաներ, (2)
(Ալելուիա Հայր Աստծուն):

2. Եկե՛ք բացենք մեր սրտերը,
Թող օրհնություն լցնի Տերը,
Գովաբանենք Աստծո Գառին:(3)
Ալելուիա, օվսաննաներ, (2)
(Ալելուիա Աստծո Գառին):

3. Խոնարհելով մեր անձերը՝
Երգենք գոհության երգերը,
Փառաբանենք Տեր Հիսուսին:(3)
Ալելուիա, օվսաննաներ, (2)
(Ալելուիա Տեր Հիսուսին):

4. Օրհնյալ լինի Աստծո Հոգին,
Լուսավորեց մեզ, ամենքին,
Գովաբանենք Տիրոջ Հոգուն:(3)
Ալելուիա, օվսաննաներ, (2)
(Ալելուիա Տիրոջ Հոգուն):